

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
34

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
34

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

34

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԴԵՐՆ ՏԱՐԱՆՑԻ Կ
ԱՌԵՎՏՐՈՒՄ ԸՍՏ Ժ.-ԺԴ.ԴԱՐԵՐԻ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ
ԱՐԱՔԱԿԱՆ ՊԱՏՄԱՎՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ¹**

Բանալի բառեր՝ Հարավային Կովկաս, տարանցիկ առևտուր, արաբական տիրապետություն, իլխանություն, վաճառական, Դվին, Պարտավ, Գանձակ, Թիֆլիս:

Հարավկովկասյան տարածաշրջանն իր աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ պատմության տարբեր ժամանակափուլերում մշտապես ներգրավված է եղել միջազգային առևտրում: Պատահական չէ, որ որպես տարանցիկ առևտրի խոշոր կենտրոններ են զարգացել այնպիսի նշանավոր քաղաքներ, որպիսիք են՝ Անին, Դվինը, Նախիջևանը, Պարտավը, Գանձակը և այլն:

Արաբական տիրապետության շրջանում Հայաստանի տնտեսական կյանքը զգալիորեն ետ էր մղվել իր առաջավոր դիրքերից: Օմայանների և առաջին Աբբասյանների ժամանակ Արևելքի առևտուրը Բյուզանդիայի հետ գրեթե անհնարին էր դարձել բյուզանդա-արաբական պարբերաբար կրկնվող պատերազմների պատճառով: Գրությունը հետզհետե փոխվեց Թ. դարից սկսած, և հատկապես՝ Ժ.-ԺԱ. դարերում²: Տվյալ ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմական անցյալում բնորոշվում է որպես տնտեսական մեծ վերելքի շրջան, որի հիմքն ու առանցքը կազմում էին քաղաքների բարգավաճումը, առևտրի բուռն զարգացումը, հարուստ և ազդեցիկ առևտրական դասակարգի ձևավորումը³: Այդ ամենի պատճառը Արևելքի և Արևմուտքի երկրների նկատմամբ Հայաստանի ունեցած տարանցիկ դիրքն էր: Տնտեսական այս վերելքի շրջանին են վերագրվում Անի, Կարս, Արծն քաղաքների հիմնումը, որոնք կարճ ժամանակահատվածում դառնում են առևտրատնտեսական խոշորագույն կենտրոններ⁴: Սկսած ԺԱ. դա-

* Մեհրապ Մաշտոցի անվան Մատենադարան, կրտսեր գիտաշխատող, kazarianelina@yahoo.com, հոդվածը ստանալու օրը՝ նոյեմբերի 11, 2022, հոդվածը գրախոսելու օրը՝ նոյեմբերի 21, 2022:

¹ Հոդվածը հրատարակվում է ՀՀ Գիտության կոմիտեի 20TTSH-046 թեմատիկ ծրագրի շրջանակներում:

² Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10-11-րդ դարերում, Երևան, 1940, էջ 9:

³ Նույն տեղում, էջ 5:

⁴ Նույն տեղում, էջ 10:

րից՝ Հարավային Կովկասի առևտրական ուղիները դառնում են նախ՝ թյուրք-սելջուկյան ցեղերի, ապա նաև մոնղոլների թիրախ՝ հսկայական եկամուտներ բերելով սելջուկյան և մոնղոլական կայսրություններին: Իրենց իշխանության ներքո միավորելով հսկայական տարածքներ, նվաճողները խիստ շահագրգռված էին միջազգային տարանցիկ առևտրի զարգացմամբ և խրախուսում էին Հարավային Կովկասի վաճառականության գործունեությունը: Ուստի անգամ նրանց տիրապետության պայմաններում, հարավկովկասյան քաղաքները մասամբ վերականգնում են եկամտաբեր ու վաճառաշատ կենտրոնների իրենց դերը:

Միջազգային տարանցիկ առևտրում Հարավային Կովկասի քաղաքների ունեցած դերի, առևտրական հարաբերությունների և նմանօրինակ հարցերի լուսաբանումը մշտապես հանդիսացել է տարբեր հետազոտողների ուսումնասիրության առարկա⁵ և այսօր էլ մնում է արդիական: Կասկածից վեր է, որ քննարկվող հարցի կապակցությամբ բարձր արժեք ունեն օտարալեզու աղբյուրները, որոնց շարքում կարևոր տեղ են զբաղեցնում արաբական և պարսկական պատմական աշխարհագրության նմուշները:

Արաբական աշխարհագրական գրականությունը որպես առանձին գիտություն ձևավորվել է Թ. դարում և զարգացման բարձր աստիճանի հասել հաջորդ հարյուրամյակում⁶: Պատմագրության այս ճյուղի առաջացումն ու զարգացումը սերտորեն կապված էին խալիֆայության գործնական պահանջների հետ⁷: Հսկայածավալ պետությանն անհրաժեշտ էին ճշգրիտ տեղեկություններ հպատակ երկրների աշխարհագրության, տնտեսության, հարկերի և այլ հարցերի վերաբերյալ⁸:

Հայաստանն առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում արաբ կամ արաբագիր գրեթե բոլոր աշխարհագիրների ու ճանապարհորդների աշխարհագրական երկերում, որոնք աչքի են ընկնում ոչ միայն իրենց քանակով, այլև արժեքավոր տեղեկություններով և շոշափվող հարցերի բազմազանությամբ: Արաբական պատմագրությունը հիմք հանդիսացավ նաև պարսկական պատմագրության

5 **Я. А. Манандян**, *О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен* (V в. до н. эры- XV в. н. эры), Ереван, 1930, նույնի՝ Հայաստանի քաղաքները 10-11-րդ դարերում, **Բ. Առափեյան**, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.*, հ. 1, Երևան, 1958, նույնի՝ հ. 2, Երևան, 1964, **Վ. Հ. Փափազյան**, *Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում 16-17-րդ դդ.*, Երևան, 1990:

6 **Իբն ալ-Ասիր**, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Ա. Տեր-Ղևոնդյանի** (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ), Երևան, 1981, էջ 9 (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր):

7 *Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր*, ներածությունը և բնագրերից թարգմանությունները՝ **Ա. Տեր-Ղևոնդյանի** (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16, Արաբական աղբյուրներ, Գ), Երևան, 2005, էջ 33 (այսուհետև՝ Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր):

8 *Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր*, էջ 33:

համար, որի սկզբնական նմուշները կա՛մ թարգմանություններ էին արաբերեն երկերից, կա՛մ հիմնվում էին արաբական աղբյուրների վրա: Պարսկալեզու պատմագրությունը զգալի վերելք ապրեց մոնղոլական Իլխանության օրոք: Պետք է նշել, սակայն, որ պատմաաշխարհագրական բնույթի պարսկերեն աշխատությունների թիվն անհամեմատ քիչ է: Ի տարբերություն արաբականի՝ նեղ է նաև Հայաստանին վերաբերող տեղեկությունների և հարցերի շրջանակը:

Սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնանք Հարավային Կովկասի այն քաղաքներին, որոնց մասին տեղեկություններ կան ժ.-ժԳ. դարերի պարսկական և արաբական պատմաաշխարհագրական աշխատություններում: Այդ քաղաքների, նրանցում արտադրվող և արտահանվող որոշ ապրանքատեսակների, ներքին և արտաքին առևտրի վերաբերյալ կարևոր տվյալների ենք հանդիպում պարսկերեն առաջին՝ ժ. դարի անհայտ հեղինակի «Հուզուդ ալ-ալամ» (Աշխարհի սահմանները) աշխարհագրական աշխատության մեջ⁹: Աշխատությունը, լինելով կոմպիլյատիվ բնույթի և հիմնված լինելով մեծամասամբ արաբական աղբյուրների հաղորդումների վրա, արժեքավոր տեղեկություններ է բովանդակում Հայաստանի ու հարակից շրջանների պատմական աշխարհագրությունից:

Մեծավաստակ արևելագետ Հ. Փափազյանն, որը նշված աղբյուրի տեղեկությունները քննել է հայոց պատմության տեսանկյունից և ներկայացրել արժեքավոր հոդվածով¹⁰, ընդգծում է, որ թեև «Հուզուդ ալ-ալամ» աշխատությունը ժամանակագրական առումով համընկնում է այն շրջանին, երբ Հայաստանում Անիի Բագրատունյաց թագավորությունից բացի, գոյություն ունեին նաև տեղական մանր թագավորություններ, աշխատության հեղինակը, սակայն, արաբական աղբյուրների ազդեցության ներքո, չի խոսում Բագրատունիների թագավորության մասին, հետևապես, ամբողջովին մոռացության են մատնվում տվյալ ժամանակաշրջանում առևտրի և արհեստագործության քաղաքային խո-

⁹ *Hudūd al-‘ālam*, 'The regions of the world', A Persian geography, 372 A. H. -982 A. D. Translated and explained by V. *Minorsky*, with the preface by V. V. *Bartold*, London, 1937 (այսուհետև՝ *Hudūd al-‘Ālam*). «Հուզուդ ալ-ալամ»-ը (Աշխարհի սահմանները) աշխարհագրական բնույթի պարսկերեն առաջին ինֆնուրույն աշխատություններից մեկն է: Գրել է 982 թ. Սամանյան պետության մեջ մտնող Գուզգանանի մարզում անհայտ մի հեղինակ: Բաղկացած է 60 գլխից: **C. Edmund Bosworth**, "Hodud-al-‘ālam," in *Encyclopædia Iranica*, vol. XII, Fasc. 4, pp. 417-418.

Կայլէջ՝ <https://iranicaonline.org/articles/hodud-al-alam> (վերջին դիտում՝ 12. 01. 2022):

¹⁰ Հ. Փափազյան, «Անանուն տաշիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (X դ.)», *Տեղեկագիր ՀՍՍՐ ԳԱ (հաս.գիտ.)*, Երևան, 1953, հ. 5, էջ 73-87 (այսուհետև՝ «Անանուն տաշիկ աշխարհագիրը...»):

շորագույն այնպիսի կենտրոնները, որպիսիք են՝ Անին, Կարսը, Արզնը և այլն¹¹: Աշխատությունից տեղեկություններ ենք քաղում Դվինի՝ իբրև «Արմինիա» վարչական միավորի կենտրոնի, նաև՝ Արճեշ, Խլաթ, Բերկրի, Բիթլիս, Նախիջևան քաղաքների վերաբերյալ: Հետաքրքրական են նաև Պարտավ (Բարդա), Թիֆլիս քաղաքներին վերաբերող հաղորդումները:

Նախքան նշված քաղաքներին վերագրվող տվյալների քննությունը, հարկ է ուշադրություն դարձնել մեկ այլ կարևոր հանգամանքի վրա: Աշխարհագրական հիշյալ երկի սկզբի՝ ընդհանուր դատողությունների բաժնում, որտեղ տրված է Ատրպատականի, Արմինիայի և Առանի մարզերի¹² և նրանց քաղաքների ընդհանուր նկարագրությունը, ի թիվս տարաբնույթ այլ տեղեկությունների, տվյալների ենք հանդիպում այդտեղ մեծաթիվ վաճառականների և տարբեր շրջաններից օտարականների առկայության մասին¹³: Այս տեղեկությունն ընդհանուր բնույթ է կրում՝ վերաբերվելով միաժամանակ նշված երեք մարզերին: Մեջբերված հաղորդումը դիտարկում ենք իբրև Հայաստանին առնչվող տեղեկություն՝ առաջնորդվելով գլխավորապես Հ. Փափագյանի այն դիտարկմամբ, որն իր հերթին հիմք ընդունելով «Հուդուդ ալ-ալամ»-ի հեղինակի հիշատակումը, թե այս երկրներն «իրար են միացած և նրանց հողերը իրար խառնված»՝ նշում է, որ բոլոր տեղեկությունները, որ վերագրվում են երեք երկրներից որևէ մեկին, վերաբերում են նաև մյուս երկուսին¹⁴: Այս վկայությունը խոսում է այն մասին, որ սկսած ժ. դարի առաջին կեսից Հայաստանում աստիճանաբար բարենպաստ պայմաններ էին ստեղծվում առևտրի զարգացման համար, որի հիմնական պատճառներից, թերևս, գլխավորն այն էր, որ երկիրը տնտեսական մեծ նշանակություն էր ստացել իբրև միակ չեզոք և նպաստավոր վայր միջազգային առևտրի և միմյանց հետ պատերազմող Բյուզանդական կայսրության և Արաբա-

11 Ըստ Հ. Փափագյանի՝ «Հուդուդ ալ-ալամ»-ի հեղինակի տեսադաշտից դուրս են մնացել այն շրջանները, որոնք ունեցել են բացառապես հայկական բնակչություն, եղել են միանգամայն անկախ և ճանաչված չեն եղել Սալմանյան պետության կողմից: Տե՛ս «Անանուն տաջիկ աշխարհագիրը...», էջ 74:

12 Նույն ժամանակաշրջանի արաբական աղբյուրներում Հայաստանը, Առանն ու Ատրպատականը մեծամասամբ ներկայացվում էին որպես մեկ երկրամաս (իլլիվ)՝ Թեև Բագրատունյաց Հայաստանը անկախ թագավորություն էր, այնուհանդերձ, արաբ մատենագիրներից ոմանք այն տեսականորեն համարում էին իսլամի խալիֆայության երկրների մեջ և այդ հիման վրա Հայաստանը ևս միացնում մանմեդական աշխարհին: Տե՛ս Արաբ մատենագիրներ, Թ-ժ դարեր, էջ 621:

«Հուդուդ ալ-ալամ» աշխատությունն արժեքավոր է նաև այն տեսանկյունից, որ այնտեղ առաջին անգամ փորձ է արվում ազատվել արաբական աշխարհագրության ավանդույթներից: Աշխատության մեջ «Արմինիա» է անվանվում միայն Հայաստանը: Տե՛ս «Անանուն տաջիկ աշխարհագիրը...», էջ 74:

13 *Hudūd al-‘ālam*, p. 142:

14 «Անանուն տաջիկ աշխարհագիրը...», էջ 74:

կան խալիֆայությունների առևտրական հարաբերությունների համար¹⁵: Բազմաթիվ վկայություններից կարելի է ենթադրել, որ տվյալ ժամանակահատվածում Հայաստանի տնտեսական վերելքը մեծապես պայմանավորված էր արտաքին և ներքին առևտրի համաքայլ զարգացմամբ: Այս ենթադրությունն իր հաստատումն է գտնում նաև վերոմեջբերյալ հիշատակության մեջ, որտեղ խոսվում է միաժամանակ և՛ տեղի վաճառականների, և՛ օտարականների մասին: Ընդ որում, կարևոր է այն ընդգծումը, որ բնագրում հանդիպող օտարական (*غريبيان*-դարիբան) բառը գործածված է օտար վաճառականներ իմաստով, որոնք, փաստորեն, տարբեր վայրերից գալիս էին հիմնականում ապրանքափոխանակության նպատակով, մինչդեռ տեղացի վաճառականների համար կիրառված է վաճառական (*بازرگان*- բազերգան) տերմինը¹⁶:

Հայկական քաղաքներից «Հուղուղ ալ-ալամ»-ում առավել բովանդակալից են Դվինին վերաբերող հաղորդումները, ինչն, իհարկե, բացատրվում է տվյալ քաղաքի՝ վարչական միավորի կենտրոն լինելու հանգամանքով: Քննվող աշխարհագրական երկրում Դվինը հիշատակվում է որպես «խոշոր, բարիքներով լի, հարուստ քաղաք, որն ունի շատ բնակիչներ և մեծ թվով վաճառականներ, իսկ քաղաքին պատկանող հողերը շատ են և հասնում են մինչև Ջազիրայի սահմանները»¹⁷: Հայաստանի քաղաքների շարքում Դվինն առանձնահատուկ տեղ էր գրավում: Ժ.-ՓԱ. դարերում, որպես առևտրատնտեսական խոշորագույն կենտրոն, Դվինը միաժամանակ նաև առևտրական ճանապարհների կարևոր հանգուցակետ էր, որտեղից ուղիները տանում էին ինչպես Հայաստանի այլ խոշոր քաղաքներ, այնպես էլ հարևան երկրներ¹⁸: Մի կողմից որպես վարչաքաղաքական կենտրոն, մյուս կողմից՝ Արևելքի և Արևմուտքի երկրների միջև ծավալված տարանցիկ առևտրի կենտրոն՝ այստեղ գործից, վարչական պաշտոնյաներից, ազնվականներից բացի, մեծ թիվ էին կազմում նաև տարբեր ազգությունների հարուստ վաճառականները¹⁹:

Նշված ժամանակաշրջանում Դվինի մասնակցությունը տեղական և միջազգային առևտրին մեծ է եղել հատկապես արհեստագործական արտադրանքով²⁰: Այստեղ առանձնապես զարգացած էր գործվածքների և գորգերի արտադրությունը: Դվինը համարվում էր նաև որդան կարմիր ներկի արտադրության գլխավոր վայրը²¹: Պատահական չէ, որ «Հուղուղ ալ-ալամ» աշխատության մեջ

¹⁵ Հ. Մանանդյան, *Երկեր*, հ. Գ, Երևան, 1977, էջ 174:

¹⁶ *Hudūd al-‘ālam*, p. 142, նաև՝ «Անանուն տաջիկ աշխարհագիրը...», էջ 83:

¹⁷ *Hudūd al-‘ālam*, p. 142-143, նաև՝ «Անանուն տաջիկ աշխարհագիրը...», էջ 78:

¹⁸ Բ. Առափեյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.*, հ. 1, էջ 75:

¹⁹ Փ. Հակոբյան, *Պատմական Հայաստանի քաղաքները*, Երևան, 1987, էջ 9:

²⁰ Հ. Մանանդյան, *Հայաստանի քաղաքները 10-11-րդ դարերում*, էջ 29:

²¹ А. Шахназарян, *Двин, Историко-географический очерк*, Ереван, 1940, сс. 92-98.

քաղաքին վերաբերող տվյալների շարադրանքում հիշատակվում է նաև որդան կարմիր ներկի և գոտինների (շավարբանդ) արտադրությունը²²: Իհարկե, սրանք Դվինում արտադրվող միակ ապրանքատեսակները չէին, որ ներքին շուկայից բացի, լայն սպառում ունեին նաև միջազգային շուկայում: Այս կապակցությամբ ուշագրավ են հատկապես արաբական աղբյուրների հաղորդումները, որոնք այս պարագայում խիստ կարևորվում են Դվինի՝ իբրև առևտրատնտեսական քաղաքի պատկերը ամբողջացնելու տեսանկյունից: Ըստ միջնադարյան հեղինակների՝ «Դվինում արտադրվում և օտար երկրներ էին արտահանվում այժի բրդե գործվածքեղեն, գոտիններ, որոնց արժեքը տատանվում էր մեկից մինչև տաս դինարի սահմաններում, գորգեր, բարձեր, գլխի փաթթոցներ, ծածկոցներ, թիկնոցներ և վարագույրներ, երփներանգ ու ծաղկավոր մետաքսեղեն (բազուն) և այլ հայկական տեսակի (ասնաֆ ալ-արմանի) ապրանքներ, որոնք ոչ մի տեսանկյունից իրենց նմանը չունեին աշխարհի որևէ ծայրում»²³:

Ժ. դարից շուրջ մեկուկես հարյուրամյակ տևած տնտեսական և քաղաքային կյանքի հարաբերական կայուն վիճակը զգալիորեն խաթարվում է հետագա տարիների ընթացքում: Սելջուկյան արշավանքներից հետո Հայաստանը որպես միջազգային առևտրի տարանցիկ ճանապարհ զգալիորեն կորցնում է իր նախկին նշանակությունը, ինչն իր բացասական կնիքն է թողնում նախևառաջ քաղաքային կյանքի վրա²⁴: Մոնղոլական տիրապետության շրջանում բարենպաստ պայմաններ են ստեղծվում միջազգային առևտրի համար: Այս ժամանակաշրջանում առևտրական ճանապարհների փոփոխությամբ պայմանավորված՝ առևտրական հարաբերություններում առաջնային դերակատարում են ստանում Հայաստանի հարավային քաղաքները²⁵: Հայաստանի հյուսիսային քաղաքների տնտեսական հետընթաց պատկերը որոշակիորեն արտացոլվում է նաև Իլխանական պատմագրության նշանավոր ներկայացուցիչ Համդալլահ Մուսթովֆի Ղազվինիի «Նուզհաթ ալ-ղուլուր» (Սրտերի մաքրություն) պատմաաշխարհագրական աշխատության մեջ²⁶, որն աղբյուրագիտական բարձր արժեք ունի և կարևոր-

²² *Hudūd al-‘ālam*, p. 143, նաև՝ «Անանուն տաջիկ աշխարհագիրը...», էջ 78:

²³ Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, էջ 574, 630, 656, Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10-11-րդ դարերում, էջ 29, 30:

²⁴ Հ. Մանանդյան, երկեր, էջ 174:

²⁵ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. XI դարից մինչև XV դարի սկիզբը, հտ. Գ, Երևան, 1952, էջ 263:

²⁶ نزّه القلوب تالیف حمدالله بن ابی بکر بن محمد بن نصر مستوفی قزوینی، با مقابله و حواشی و تعلیقات و فهارس محمد دبیر سیاقی تهران 1336 (այսուհետև՝ «Նուզհաթ ալ-ղուլուր»):

«Նուզհաթ ալ-ղուլուր» աշխատությունը Ղազվինիի ամենահայտնի ստեղծագործությունն է: Տիեզերագիտությանն ու աշխարհագրությանը նվիրված այս ստվար աշխատությունը հեղինակն ավարտին է հասցրել Հ^{ՅՊ} 740/1340 թվականին: Աշխատությունը բաղկացած է նախաբանից, երեք գլխից և վերջաբանից: Պատմական սկզբնաղբյուրի արժեք ունի աշխատության

վում է Իլխանուլթյանն ենթակա ընդարձակ երկրամասերի տնտեսական պատմության ուսումնասիրության տեսանկյունից: «Նուզհաթ ալ-դուլուբ» աշխատության մեջ որևէ անդրադարձ չկա առևտրատնտեսական երբեմնի խոշորագույն կենտրոն Դվինին: Հայաստանի հյուսիսային երկու նշանավոր քաղաքներին՝ Կարսին և Անիին վերաբերող հաղորդումների խիստ հակիրճ շարադրանքում միայն տնտեսական բնույթի ընդհանրական տվյալներ են²⁷: Ըստ այդմ՝ Ղազվինին Անին հիշատակում է հինգերորդ իլլիմի²⁸ կազմում՝ հայտնելով նաև քաղաքի աշխարհագրական կոորդինատները, ապա հավելում, որ քաղաքը [հայտնի է] հացահատիկի և քիչ քանակությամբ մրգի բերքով²⁹: Կարս քաղաքին վերաբերող տվյալներում Ղազվինին վկայակոչում է ԺԳ. դարի արաբ աշխարհագրագետ Յակուտ ալ-Համավինի՝ մեջբերելով վերջինիս վկայությունն առ այն, որ Թիֆլիսից Կարս երկու օրվա ճանապարհ է, ապա նաև նշում, որ հողը բարեբեր է, հայտնի է հացահատիկի բերքով³⁰:

Նշված քաղաքների վերաբերյալ որոշ հիշատակություններ հանդիպում ենք Ղազվինիից մի փոքր վաղ հանդես եկած, մոնղոլական պատմագրության նշանավոր մատենագիր Ալա ալ-Դին Աթա Մալիք իբն Մուհամմեդ Զուվեյնիի «Թարիխ-ե Զահանգոշա» (Աշխարհի նվաճման պատմություն) պարսկերեն աշխատության մեջ, որոնք հիմնականում ԺԳ. դարին վերագրվող ռազմաքաղաքական դեպքերին են վերաբերում³¹:

Միջազգային տարանցիկ առևտրում զգալի դեր ունեւր Պարտավ (Բարդա) քաղաքը: Գտնվելով առևտրական ճանապարհների հատման վայրում՝ Պարտավը արաբական տիրապետության շրջանում տարածաշրջանի գլխավոր քաղաքներից էր³²: «Հուղուղ ալ-ալամ»-ում Պարտավը հիշատակվում է որպես Առանի կենտրոն, տվյալ մարզի թագավորների աթոռանիստ քաղաք՝ մեծ և բարեբեր, կանաչագարդ հողատարածքներով, խիտ ցանքերով, առատ հացահատիկով և

երոորդ գլուխը, որն իր հերթին բաղկացած է չորս մասից: Երկրորդ մասը նվիրված է մոնղոլական Իլխանության վարչական և սոցիալ-տնտեսական պատմությանը: Տե՛ս **Charles Rieu**, *Catalogue of the Persian Manuscripts in the British Museum*, (4 vols, 1879-1895), vol. 1, p. 418-419.

²⁷ «Նուզհաթ ալ-դուլուբ», էջ 108:

²⁸ Իկլիմ (կլիմա) բառը մեծամասամբ կիրառում են արաբ մատենագիրները: Ըստ համատեփտի՝ այն կարող է նշանակել երկրների խումբ, երկրամաս, կլիմայական գոտի, մանանգ: Տե՛ս *Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր*, էջ 412:

²⁹ «Նուզհաթ ալ-դուլուբ», էջ 108:

³⁰ Նույն տեղում:

³¹ *The History of the World Conqueror* by 'Ala-ad-Din 'Ata Malik Juvaini. Translated from the text Mirza Muhammad Qazvini by **John Andrew Boyle**, voll. 2, Cambridge Massachusetts: Harvard University Press, 1958, p. 429.

³² **В. В. Бартольд**, *Сочинения*, т. 7, Москва, 1971, с. 213.

մրգերով³³: Աշխարհագրական հիշյալ երկում խոսվում է նաև Պարտավում արտադրվող մեծաքանակ մետաքսի, ներկարարական բույսերի, ընտիր ջորիների մասին³⁴: Թ.-ժ. դարերում Պարտավը ոչ միայն Առանի, այլև տարածաշրջանի մեծահամբավ քաղաքներից էր, որի մասին մեծ գովեստով են խոսում հայ և օտարազգի հեղինակները: Հայ պատմագրության մեջ Պարտավը հաճախ որակվել է որպես շահաստան քաղաք («շահաստան») անունն էին կրում մեծ և վաճառաշահ քաղաքները, նահանգների կամ գավառների կենտրոնները), Առանի և ամբողջ սահմանային գոտու գլխավոր քաղաք, մեծ քաղաք, բերդաքաղաք, մայրաքաղաք³⁵: Պարտավի վերաբերյալ կարևոր տեղեկություններ մեզ հայտնում են արաբ հեղինակները, որոնք, ակնարկելով քաղաքի առաջնակարգ և բացառիկ դիրքը, բարեկարգ և բարեբեր լինելը՝ հաճախ Պարտավը համեմատում են հուշակավոր Ռեյ և Սպահան քաղաքների հետ և հավելում, որ Իրաքի և Խորասանի միջև չկա ավելի բարեբեր և գեղեցիկ վայր, քան Պարտավն է³⁶: Արաբ մատենագիրներն առանձնակի ընդգծվածությամբ են խոսում Պարտավում արտադրվող տարատեսակ ապրանքների, հատկապես՝ մետաքսի արտադրության մասին՝ նշելով, որ այն մեծ զարկ է ստացել «շնորհիվ անթիվ ու անտեր թիթենիների, և արտահանվում է դեպի Պարսկաստան և Խուզիստան»³⁷:

Արաբական աղբյուրներում Պարտավին առնչվող տվյալների բազմազանություն մեջ իրենց կարևորությամբ աչքի են ընկնում հատկապես քաղաքի բազմամարդ շուկաների, դրանց ներսում գտնվող իջևանատների ու բաղնիքների վերաբերյալ տեղեկությունները³⁸, որոնք իրենց բնույթով վկայում են զարգացած առևտրի մասին: Ներքին առևտրի մեջ ամենօրյա շուկայի կողքին կարևոր դեր ունեին նաև կիրականօրյա շուկաները, որոնք հաճախ տոնավաճառային բնույթ էին կրում³⁹: Այս կապակցությամբ հիշարժան են արաբական աղբյուրների վկայությունները Պարտավ քաղաքի՝ «ալ-Քուրքի» (կիրակի) անունով հայտնի կի-

³³ *Hudūd al-‘ālam*, p. 143, նաև՝ «Անանուն տաշիկ աշխարհագիրը...», էջ 79:

³⁴ Նույն տեղում:

³⁵ **Եղիշեի Վարդանանց պատմությունը**, քարգմանությամբ և ծանոթագրություններով՝ պրոֆ. դ-ր Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1958, էջ 71, **Մովսես Կաղանկատուացի**, *Պատմություն Աղուանից աշխարհի*, աշխ.՝ Գ. Քասպարյանի, (Մատենագիրք հայոց, ԺԵ. հատոր, հ. Ժ. դար, Գիրք Բ), Երևան, 2011, էջ 76, 179, **Հ. Մանանդյան**, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հ. Բ, Մասն Ա, Երևան, 1957, էջ 310:

³⁶ Արաբ մատենագիրներ, Թ.-ժ դարեր, էջ 573, 627, 652:

³⁷ **Յակուտ ալ-Համավի, Աբու-Ֆիդա, Իբն Շադդադ**, կազմեց Հ. Թ. Նալբանդյանը (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 3, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին), Երևան, 1965, էջ 35 (այսուհետև՝ Յակուտ ալ-Համավի, Աբու-Ֆիդա, Իբն Շադդադ):

³⁸ Արաբ մատենագիրներ, Թ.-ժ դարեր, էջ 573, 628, 652:

³⁹ **Բ. Առափեյան**, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.*, հ. 2, Երևան, 1964, էջ 28:

րակնօրյա տոնավաճառների վերաբերյալ: Ըստ Թ. դարի արաբ աշխարհագրագետ Իսթահրիի՝ այս շուկան գտնվում էր Պարտավի դռներից մեկի մոտ՝ մեկ փարսախ հեռավորության վրա, որտեղ յուրաքանչյուր կիրակի հավաքվում էին գրեթե բոլոր երկրներից, նույնիսկ Իրաքից ժամանած մեծ թվով վաճառականներ⁴⁰: Մեջբերված տարաբնույթ վկայությունների բազմազանության մեջ Պարտավը հանդես է գալիս իբրև առևտրատնտեսական և արդյունաբերական խոշորագույն կենտրոն, որն ուներ իր մեծությունը հատուկ աշխույժ ներքին առևտուր և լայնորեն ներգրավված էր նաև միջազգային տարանցիկ առևտրում: 913-914 թթ. ռուսների արշավանքից հետո⁴¹, վերջինս հետզհետե կորցրեց տնտեսական և քաղաքական երբեմնի նշանակությունը՝ իր տեղը զիջելով միայն տասնամյակների պատմություն ունեցող Գանձակ քաղաքին, որը հետագա դարերում ունեցավ աննախադեպ զարգացում՝ մինչև իսկ գերազանցելով Պարտավին⁴²:

Համեմատաբար ուշ շրջանի աղբյուրներում Պարտավ քաղաքի մասին տեղեկություններ գրեթե չենք հանդիպում, իսկ եղած անդրադարձներն էլ հիմնականում ներկայացնում են տվյալ քաղաքի՝ նախորդ դարաշրջաններին բնորոշ նկարագիրը: Նմանօրինակ պատկերի ակնատեսն ենք լինում նաև «Նուզհաթ ալ-դուլուբ» աշխատության մեջ: Ղազվինին, որը Պարտավ քաղաքի հիմնումը կապում է Ալեքսանդր Մակեդոնացու, իսկ վերակառուցումը՝ Պերոզ Կավատի գործունեության հետ, հայտնում է, որ Պարտավը եղել է նշանավոր քաղաք՝ հայտնի անհամար հարստություններով, հոյակերտ շինություններով, բազմատեսակ մրգերով, կաղինով ու շագանակով⁴³: Պարտավ քաղաքի՝ Ժ.Գ. դարին համապատասխան նկարագիրը հանդիպում ենք արաբ մատենագիր Յակուտի մոտ: Վերջինիս հաղորդմամբ՝ «քաղաքը գտնվում է ավերյալ վիճակում, բնակչությունը զգալիորեն պակասել է՝ հավասարվելով մի գյուղի բնակչության, քաղաքը կորցրել է իր նշանակությունը՝ դառնալով անկարևոր մի վայր»⁴⁴: Վերջինս ակնարկում է նաև Պարտավի կիրակնօրյա տոնավաճառների մասին՝ ընդգծելով, որ ասվածը վերաբերում է անցյալ ժամանակներին⁴⁵:

Կարճ ժամանակահատվածում մեծ հռչակ է ձեռք բերում Գանձակ քաղաքը՝

⁴⁰ Արաբ մատենագիրներ, Թ.ժ դարեր, էջ 573:

⁴¹ Ռուսների արշավանքը դեպի Պարտավ տեղի է ունեցել 913-914 թվականներին: Այս մասին հիշատակություններ կան պահպանված արաբական աղբյուրներում: Ըստ Ժ. դարի արաբ մատենագիր Մասուդի՝ արշավանքը կատարվել է 50000-անոց բանակով, 500 նավով, յուրաքանչյուր նավում՝ 100 զինվոր: Տե՛ս «Անանուն տաջիկ աշխարհագիր...», էջ 85, ծան. 74:

⁴² Բ. Առափեյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ.1, էջ 116:

⁴³ «Նուզհաթ ալ-դուլուբ», էջ 105:

⁴⁴ «Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շահրազ», էջ 36:

⁴⁵ Նույն տեղում:

դառնալով տարածաշրջանի ամենաբազմամարդ ու վաճառաշահ քաղաքներից մեկը⁴⁶: Վաղ շրջանի օտարալեզու աղբյուրներում Գանձակին վերաբերող տեղեկությունները հպանցիկ բնույթ են կրում: «Հուզուզ ալ-ալամ» երկում Գանձակը բնորոշվում է որպես առատ ցանքով և հացահատիկով, շեն և բարեբեր քաղաք⁴⁷: Արաբ աշխարհագրագետ Իսթահրին ժ. դարում Գանձակը հիշատակում է որպես փոքր քաղաք՝ ընկած Պարտավից Թիֆլիս ճանապարհին⁴⁸: Նույն դարի արաբ մեկ այլ մատենագիր Գանձակը դասում է Առանի փոքր տիրույթների թվին՝ ներկայացնելով այն որպես բարեբեր, առատ աղբյուրներով, բարգավաճ քաղաք⁴⁹: Տարբեր աղբյուրների տվյալների քննությունը թույլ է տալիս արձանագրել, որ Գանձակում զարգացած են եղել արհեստների գրեթե բոլոր ճյուղերը: «Հուզուզ ալ-ալամ»-ում, օրինակ, հիշատակվում է բոլոր տեսակի բրդե գործվածքների արտադրությունը⁵⁰: Օտարալեզու այլ աղբյուրներում որոշ հիշատակումների ենք հանդիպում Գանձակում արտադրվող ձիու պայտի, երկաթի, նաև խաղողի, նռան, կաղինի արտադրության մասին⁵¹:

Չնայած հետագա դարերում Գանձակը բազմիցս ավերվում է իրար հաջորդող արշավանքների և երկրաշարժների հետևանքով, սակայն տարածաշրջանի բազմաթիվ այլ բնակավայրերի և քաղաքների նկատմամբ երբեք չի կորցնում իր առաջնային նշանակությունը⁵²: Գանձակ քաղաքի մեծությունը և բազմամարդությունը վերաբերյալ որոշ հետևություններ կարելի է անել նաև այդտեղ 1139 թվականին տեղի ունեցած երկրաշարժի վերաբերյալ տվյալներից: Այս կապակցությամբ արժեքավոր է ժԳ. դարի արաբ մատենագիր Իբն ալ-Ասիրի վկայությունը, որտեղ պատմիչը նաև թվական տվյալներ է հաղորդում զոհերի վերաբերյալ. «Այդ տարում Գանձակում (Քանջա, Գանջա) և Ատրպատականի ու Առանի այլ կողմերում երկրաշարժ եղավ, սակայն ամենաուժեղը Գանձակում էր, ու շատ տներ կործանվեցին: Անհամար ժողովուրդ զոհվեց, ասվում է, որ մեռածների

46 Ս. Կարապետյան, *Հյուսիսային Արցախ*, Գիրք 2, Երևան, 2004, էջ 19 (այսուհետև՝ Հյուսիսային Արցախ):

47 Hudūd al-‘ālam, p. 144, նաև՝ «Անանուն տաջիկ աշխարհագիրը...», էջ 79:

48 В. В. Бартольд, *Сочинения*, т. 3, Работы по исторической географии, М., 1965, с. 405.

49 Արաբ մատենագիրներ, Թ-ժ դարեր, էջ 630:

50 Hudūd al-‘ālam, p. 144, նաև՝ «Անանուն տաջիկ աշխարհագիրը...», էջ 79:

51 Էվլիյա Չելեբի, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Խ. Սաֆրաստյանի, (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 4, Թուրքական աղբյուրներ, Գ), Երևան, 1967, էջ 86, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 2), Երևան, 1964, էջ 14:

52 Հյուսիսային Արցախ, էջ 19:

թիվը երկու հարյուր երեսուն հազար էր»⁵³: Մեջբերված տվյալներից կարելի է եզրակացնել, որ տվյալ ժամանակաշրջանում Գանձակը եղել է տարածաշրջանի առավել մեծ և խիտ բնակեցված քաղաքներից մեկը:

«Նուզհաթ ալ-դուլուբ» աշխատության մեջ Գանձակը բնորոշվում է իբրև հիասքանչ և բարձր արտագրողականությունը քաղաք⁵⁴, իսկ քաղաքի՝ տվյալ ժամանակաշրջանին հատուկ կարևորությունն ու տնտեսական նշանակությունը լավագույնս դրսևորվում է Ղազվինիի՝ Գանձակին ձոնած քառատողում՝

Քիչ ֆաղաֆներ կան, որ ավելի բարեբեռ են՝ մյուսների համեմատ,
Առավել հարուստ՝ շնորհիվ կլիմայի և բերրի հողի,
Իրանցից է՝ Գանձակը՝ Առանում՝ իբրև իսկական գանձ,
Սպահանը՝ Իրանում, Մերվը՝ Խորասանում, Ակսարան՝ Ռումում⁵⁵:

Աշխարհագրական բարենպաստ դիրքի շնորհիվ, պատմական գրեթե բոլոր ժամանակներում տնտեսական կարևոր հանգույց է հանդիսացել նաև Թիֆլիս (Տիֆլիս) քաղաքը: Հետաքրքրական է այդ քաղաքի նկարագրությունը «Հուզուդ ալ-ալամ» աշխատության մեջ, որտեղ Թիֆլիսը ներկայացվում է իբրև շեն ու կանգուն, բարիքներով լի, մեծ ու կանաչագարդ քաղաք: Նշվում է, որ քաղաքն ունի երկու պարիսպ և բերդ է [հանդիսանում] անհավատների դեմ: Խոսվում է նաև քաղաքի միջով անցնող Կուր գետի և նրա վրա կառուցված բաղնիքների մասին, որոնք շարունակ տաք են առանց կրակի⁵⁶: Հատկանշական է, որ Թիֆլիս քաղաքի հանքային բուժիչ աղբյուրներն իրենց երկերում հիշատակում են ժամանակի և հետագայի մի շարք աշխարհագրագետներ ու ճանապարհորդներ⁵⁷: «Հուզուդ ալ-ալամ»-ին ժամանակագրական առումով մոտ արաբական աղբյուրներում ևս արտացոլվում է Թիֆլիս քաղաքի տնտեսական գրեթե նույն նկարագիրը⁵⁸: Արաբ մատենագիրների հաղորդումներում Թիֆլիսը հիշատակվում է որպես բարեբեռ, բարիքներով լի քաղաք, որն «ավելի առատ է, քան բոլոր այն վայրերը, որոնք հայտնի են իրենց ապրանքների էթանությունը և հեշտ ապրուստով»⁵⁹: Մատենագիրներից ոմանք հավելյալ տեղեկություններ են հայտնում

53 Իբն ալ-Ասիր, էջ 250, նաև՝ Հյուսիսային Արցախ, էջ 25:

54 «Նուզհաթ ալ-դուլուբ», էջ 105:

55 Նույն տեղում:

56 *Hudūd al-‘ālam*, p. 144, նաև՝ «Անանուն տաջիկ աշխարհագիրը...», էջ 79: Ըստ Հ. Փախագյանի՝ Վրաստանի մայրաքաղաքի հիշատակությունը «Հուզուդ ալ-ալամ» աշխատության մեջ հետևանքն է այն բանի, որ ժ. դարի վերջերին այդտեղ դեռևս շարունակում էին տիրել արաբ էմիրները, այդ է պատճառը, որ հեղինակն այն անվանում է «պարիսպ և բերդ անհավատների դեմ»: Տե՛ս «Անանուն տաջիկ աշխարհագիրը...», էջ 85, ծան. 72:

57 Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, էջ 629, «Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ», էջ 41:

58 Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, էջ 629:

59 Նույն տեղում:

նաև Թիֆլիսի քաղաքական անցքերի վերաբերյալ⁶⁰: Ժ. դարի արաբ աշխարհագրագետ Իբն Հուլկալի հաղորդմամբ՝ քաղաքը կարևոր սահմանային ամրություն է համարվում և ամեն կողմից շրջապատված է թշնամիներով⁶¹: Նույն հեղինակը, ենթադրաբար, նկատի ունենալով Դավիթ Շինարար թագավորին (1089-1125), նշում է նաև, որ թեև վրաց թագավորն անհավատ է, բայց հոգատար է ժողովրդի նկատմամբ և արգելում է նրան վնաս հասցնել⁶²:

«Նուզհաթ ալ-դուլուբ» երկում Թիֆլիս քաղաքի մասին կարդում ենք հետևյալը. «Քաղաքի միջով հոսում է Կուր գետը: Գետի ափերին ընկած տներն այնպես են կառուցված, որ վերևի շարքի փողոցի սալահատակը տանիք է հանդիսանում ներքևի շարքի տների համար: Այստեղ մեծ թվով բաղնիքներ կան, որոնց ջուրը բնականից տաք է, հետևաբար լրացուցիչ կրակ անելու կարիք չկա: Քաղաքը հայտնի է ընտիր հացահատիկի և քիչ քանակությամբ մրգի բերքով»⁶³: Պարսկերեն այլ աղբյուրներում քաղաքական բնույթ կրող հաղորդումների մեջ որոշ ակնարկներ կան միայն Թիֆլիս քաղաքի ամրոցների և եկեղեցիների վերաբերյալ: Այդ կարգի հիշատակություններից մեկը վերաբերում է Ջալալեդդինի՝ դեպի Վրաց երկիր կատարած արշավանքներին, որտեղ նշվում է, թե ինչպես են Թիֆլիսի սահմաններում գտնվող բոլոր գյուղերն ու ամրոցները հայտնվում թշնամու շրջափակման մեջ, և նաև այն, որ Ջալալեդդինի հուժկու գրոհներից զերծ չեն մնում նաև քաղաքի եկեղեցիները, որոնց շինարարության համար հին ժամանակներից ի վեր ծախսվել էին մեծաթիվ գանձեր⁶⁴: Թիֆլիս քաղաքի հայտնի բաղնիքների վերաբերյալ մեջբերվող տեղեկություններից զատ, որոնք, ինչպես նկատելի է, մշտական տվյալ են հանդիսանում մեր մատնանշած գրեթե բոլոր աղբյուրներում, Ժ.Գ.-Ժ.Գ. դարերի արաբական աղբյուրներում նկարագրվում են նաև Թիֆլիսի քաղաքական պատմությանն առնչվող որոշ դրվագներ: Յակուտ ալ-Համավի, օրինակ, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Ջալալեդդինի կողմից Թիֆլիսի գրավման փորձերի և քաղաքին տիրելու մասին⁶⁵:

Հիշյալ քաղաքին վերաբերող տնտեսական բնույթի տեղեկությունների բացը մասամբ լրացվում է եվրոպացի հեղինակների շնորհիվ: Նրանց հայտնած տվյալները, սակայն, ուղղակիորեն չեն առնչվում Թիֆլիս քաղաքին, այլ կրում են համընդհանուր բնույթ: Հիշարժան են հատկապես Ժ.Գ.-Ժ.Գ. դարի վենետիկցի վաճառական և ճանապարհորդ Մարկո Պոլոյի վկայությունները՝ Վրաստանի

⁶⁰ Իբն Ալ-Ասիր, էջ 158, 159:

⁶¹ Արաբ մատենագիրներ, Թ.Ժ դարեր, էջ 629:

⁶² Նույն տեղում:

⁶³ «Նուզհաթ ալ-դուլուբ», էջ 108:

⁶⁴ *The History of the World Conqueror* by 'Ala-ad-Din 'Ata Malik Juvaini, vol. 2, Cambridge Massachusetts: 1958, p. 432.

⁶⁵ «Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ», էջ 41-43:

բազմաթիվ քաղաքների և գյուղերի մասին, որոնցում մատնանշվում է մետաքսի արտադրության լայն տարածումը: Ըստ նրա՝ այնտեղ «կան բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր, և մետաքս է արտադրվում մեծ առատությամբ: Երկիրը արտադրում է ամեն տեսակի շատ նուրբ մետաքսե կտորեղեն»⁶⁶: Տարանցիկ առևտրում բոլոր ժամանակներում մեծ պահանջարկ ունեցող մետաքսե գործվածքեղենից բացի, նույն հեղինակը հայտնում է նաև Վրաստանում հյուսվող ոսկե կերպասների և նաև սակռերի (goshawks)⁶⁷ արտադրության մասին՝ բնորոշելով վերջինս որպես «լավագույնը աշխարհում»⁶⁸: Եվրոպացի հեղինակն ընդհանուր գծերով է ներկայացնում տվյալ երկրի տնտեսական պատկերը՝ նշելով, որ «երկիրը ոչ մի բանի պակասություն չունի, և ժողովուրդն ապրում է առևտրով և արհեստներով»⁶⁹:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ Ժ.-ԺԴ. դարերի պարսկերեն և արաբերեն պատմաաշխարհագրական երկերի հաղորդումները բովանդակում են արժեքավոր տվյալներ, որոնք այլ աղբյուրների տվյալների համալրման և համեմատական վերլուծության պարագայում հնարավորություն են ընձեռում հստակեցնելու Հարավային Կովկասի խոշորագույն քաղաքների տնտեսական նկարագիրը և դրանց դերն առևտրական հարաբերություններում՝ առևտրի ժամանակագրական զարգացման առանձնահատկությունների համատեքստում:

ELINA GHAZARYAN

THE ROLE OF SOUTH CAUCASIAN CITIES
IN TRANSIT TRADE ACCORDING TO THE PERSIAN AND ARABIC
HISTORICO-GEOGRAPHICAL WORKS OF 10TH-14TH CENTURIES

Key words: The South Caucasus, transit trade, Arab rule, Ilkhanate, merchant, Dvin, Barda, Gandzak, Tiflis.

Thanks to its geographical location, the South Caucasus has been involved in international trade in different periods of history. No wonder that the prominent cities like Dvin, Ani, Barda, and Gandzak developed as large centers of transit trade. The

⁶⁶ Հ. Հակոբյան, *Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության* (Ուղեգրություններ, հ. Ա, ԺԳ-ԺԶ դար, 1253-1582), Երևան, 1932, էջ 53 (այսուհետև՝ Ուղեգրություններ):

⁶⁷ «Սակո» բառը հայանի է մի շարք լեզուներում, ինչպես օրինակ՝ արաբերեն صقر «որսի բազե», ֆրդերեն՝ sakkar- «որսկան թռչուն»: Տե՛ս Հր. Աճառյան, *Հայերեն արամատական բանարան*, հ. 4, Երևան, 1979, էջ 161:

⁶⁸ *Ուղեգրություններ*, էջ 53:

⁶⁹ Նույն տեղում:

role of South Caucasian cities as transit points and stops on trade routes has always been a subject of study and is still relevant today. Foreign sources, among which the Persian and Arabic historico-geographical works are of special importance, are invaluable for the study of the topic.

By a comparative analysis of Persian, Arabic and other sources, the author of the article discusses economic issues and the role of South Caucasian cities in the trade of the region within the context of political and socio-economic realities specific to each stage of this period.

ЭЛИНА КАЗАРЯН

**РОЛЬ ГОРОДОВ ЮЖНОГО КАВКАЗА В ТРАНЗИТНОЙ
ТОРГОВЛЕ ПО ДАННЫМ ПЕРСИДСКИХ И АРАБСКИХ
ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКИХ ТРУДОВ X-XIV ВЕКОВ**

Ключевые слова: Южный Кавказ, транзитная торговля, арабское правление, Ильханат, купец, Двин, Партав, Гандзак, Тифлис.

Благодаря своему географическому положению регион Южного Кавказа в разные периоды истории был вовлечен в транзитную торговлю. Не случайно, такие известные города, как Двин, Ани, Барда, Гандзак превратились в крупные центры транзитной торговли.

Освещение роли городских центров Южного Кавказа в качестве транзитных пунктов и остановок на торговых путях в транзитной торговле, в различных торговых отношениях и тому подобные вопросы всегда были предметом изучения исследователей и актуальны до сих пор. Неоценимое значение в отношении обсуждаемого вопроса имеют источники на иностранных языках, среди которых особое место занимают персидские и арабские историко-географические труды.

В рамках статьи, путём сравнительного анализа персидских и арабских историко-географических трудов X-XIV веков и данных других источников представлена экономическая картина и роль городов Южного Кавказа в торговле региона в контексте политических и социально-экономических реалий, характерных для каждого этапа указанного периода.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ազատ Բոզոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան 22

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում 40

Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ
առևտրում ըստ Ժ.-Ժ.Գ. դարերի պարսկական և արաբական
պատմաաշխարհագրական երկերի 60

Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի
հրատարակման նախապատմությունը..... 83

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը 93

Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի
գրավոր աղբյուրները..... 113

Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցիև և նրա
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131

ԱՐՎԵՍ

Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակները
հայկական մանրանկարներում..... 166

Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի
մոնոդիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը 268

Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների
գործունեության մասին 295

Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների և գրադարանային
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը 321

Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի ձեռագիր և
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) 330

Հերմինէ Գրիգորեան

Յուցակ կիսաբունի Կիլպէնկեան թանգարանի հայերէն ձեռագրերի..... 350

ՔԱՆԱՎԵՃ**Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում 377

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Մանեա Էնա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը 420

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ**Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) 432

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 438

CONTENTS

HISTORY

Azat Bozoyan

The Role of Antioch in the Policy
of Levon the Magnificent5

Karen Matevosyan

Anticatholicos Anania of the Sultanate of Rum22

Gagik Danielyan

Official Correspondence and Diplomatic
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

Elina Ghazaryan

The Role of South Caucasian Towns
in Transit Trade According to the Persian and Arabic
Historico-Geographical Works of 10th-14th Centuries.....60

Georgi Mirzabekyan

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

Haykaz Hovhannisyan

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory
of the Publication of the Journal “Nortern Lights”.....83

PHILOLOGY

Davit Gevorgyan

The Translational Movement Initiated by Grigor II V kayaser.....93

Donara Karapetyan

The Written Sources of Asar Sebastats‘i’s
Book of Medical Art.....113

Anna Ohanjanyan

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs
of Mush and his Book *Key of Truth*.....131

ART

Avet Avetisyan

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*
in Armenian Miniatures.....166

Seda Manukyan

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

Anna Arevshatyan

Observations on the melodic thinking in
the monodies of the Liturgy in the arrangements
by Makar Yekmalian and Komitas..... 212

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and
His Newly Discovered Poems..... 233

Lusine Tumanyan

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘ 268

Hasmik Kirakosyan

A Recently Discovered Document about the Activity
of Evangelical Missionaries in Shushi..... 295

Mihran Minassian

A Previously Unpublished List of Diocesan Villages of the
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries
of Pasen and Takht (1861–1866)..... 305

BIBLIOGRAPHY**Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of
Handwritten Remarks and Library Notes in
Armenian Early Printed Books..... 321

Tatevik Manukyan, Knarik Sargsyan

Handwritten and Library Notes of Early Printed Books
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

Hermine Grigoryan

Catalogue of the Armenian Manuscripts of the
Gulbenkian Museum in Lisbon..... 350

DISCUSSION**Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

REPORT**Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies.....420

OBITUARY**Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Азат Бозоян Роль Антиохии в политике Левона Великого.....	5
Карен Матевосян Антикатоликос румского султаната Анания.....	22
Гагик Даниелян Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3).....	40
Элина Казарян Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков.....	60
Георгий Мирзабекян Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г.....	74
Айказ Оганесян Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”.....	83

ФИЛОЛОГИЯ

Давид Геворгян Переводческое движение, начатое Григором II Вкаясером.....	93
Донара Карапетян Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”.....	113
Анна Оганджян Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины».....	131

ИСКУССТВО

Авет Аветисян Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах.....	166
Седа Манукян Образчик брнашенской школы миниатюры.....	199
Анна Аревшатян Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмаляна и Комитаса.....	212

ПУБЛИКАЦИИ

Ани Аракелян

Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения..... 233

Лусине Туманян

Гандзы и таги Ованеса Бргутенца 268

Асмик Киракосян

Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши 295

Мигран Минасян

Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.)..... 305

БИБЛИОГРАФИЯ

Геворг Тер-Варданян

Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах 321

Татевик Манукян, Кнарик Саргсян

Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина)..... 330

Эрмине Григорян

Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне 350

ДИСКУССИЯ

Нарине Варданян

История развития “Армянской Книги канонов”. Исследование или искажение фактов? 377

СООБЩЕНИЕ

Манеа Эрна Ширинян

XXIV всемирный конгресс византинистов 420

НЕКРОЛОГ

Назени Гарибян

Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022)..... 432

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 34

BULLETIN OF MATENADARAN

Volume 34

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 34

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի քվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/